ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ << Դիմանկարի ժանրի առանձնահատկությունները>>

Հեղինակ՝ Եղիազարյան Վարդիթեր

Ղեկավար՝ Լիլիթ Իսկոյան /մանկ. գիտ. թեկ., դոցենտ/

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ---------- 3

Գլուխ 1.Դիմանկարի կատարման առանձնահատկությունները ---------- 5

1.1Դիմանկարի ժանրը պատմական զարգացման փուլերում ---------- 7

1.2 Դիմանկարի ժանրը հայ կերպարվեստում ---------- 10

1.3 Դիմանկար: Կատարման առանձնահատկությունները ----------

11

Եզրակացություն ----------27

Օգտագործված գրականության ցանկ ---------- 28

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Դիմանկարը կերպարվեստի ամենահին ժանրերից է:Դիմապատկերը կոնկրետ մարդու կամ մի խումբ մարդկանց պատկերն է կամ նկարագիրը, որը դրսևորվում է կերպարվեստի տեսակների միջոցով՝ գեղանկար, գծանկար, քանդակ և վերջին ժամանակներս նաև լուսանկարչական արվեստ: Ժանրի առաջնահերթ խնդիրն է պատկերել մարդու բնորոշ դիմագծերը, նմանությունը: Նկարիչը միաժամանակ պատկերվողի դեմքի մեջ բացահայտում է նրա ներաշխարհը, ազգային ու հասարակական պատկանելիությունը:

Հայ կերպարվեստում դիմանկարի ժանրին շատ նկարիչներ են անդրադարձել, բայց ակնառու դեմքերից է Ստեփանոս Աղաջանյանը: Նրա դիմանկարները և սուր տիպաժային են, և ընդհանրական: Կերպարներն օժտված են ռեալիզմի լավագույն ավանդույթներով: Դիմանկարի գլխավոր նպատակն է ցույց տալ տվյալ մարդու անհատական առանձնահատկությունները, սակայն դիմանկարչությանը բնորոշ են նաև այս կամ այն աստիճանի ընդհանրացումները: Որքան խորն է դիմանկարի անհատական նմանությունն, որքան ընդգրկուն է բացահայտված պատկերվածի անձնավորությունը, այնքան ավելի շատ է այն պարունակում ընդհանուրին վերաբերող պատկերացումներ:

Հայ կերպարվեստի դիմանկարի ժանրի հիմնադիրն է Հակոբ Հովնաթանյանը: Նրա հայտնի աշխատանքներից են՝ ·Շուշանիկ Նադիրյան, ·Ներսես Աշտարակեցի· և այլն: Դիմանկարը պատկերում է մարդկանց տարբեր դիրքերով, այն կարող է լինել միայն գլուխը, մինչև կուրծքը, գոտկատեղով և այլն: Բոլոր դիմանկարներում թե անհատական, թե խմբակային, նկարչի խնդիրն մնում է նույնը՝ բացատրել մարդկանց բնորոշ տիպական գծերն ու անհատականությունը: Այդ պատճառով առանձին դիմանկարներում, որոնց մեջ խորապես բացահայտված են արտահայտչականությունները, դրանք տալիս են նաև ընդհանուր պատկերացում տվյալ դարաշրջանի մարդկանց, տվյալ դարաշրջանի հասարակական վարք ու բարքի մասին: Դիմանկարում պատկերվում է արտաքին պատկերը, որի միջոցով երևում է ներքին աշխարհը: Դիմանկարի ընդհանուր թեման դա մարդու անհատական կյանքն է: Հաշվի չառնելով թե դիմանկարում քանի մարդ կա պատկերված՝ երկու կամ ավելի, նրանցից յուրաքանչյուրն ունի հարաբերական ինքնավարություն:

Նկարիչը պետք է լինի խորաթափանց, պետք է զգա մարդու ներաշխարհը և կարողանա իր զգացմունքները փոխանցել կտավին: Անհրաժեշտ է նշել, որ դիմանկարում նմանությունը դեռևս միակ և որոշող նախապայմանը չէ, կարելի է կատարման ընթացքում հասնել բացարձակ նմանության, դրանով իսկ իրականում չլուծել դիմանկարի կատարման ամենակարևոր՝ ստեղծագործական խնդիրները:

Գլուխ 1.
ԴԻՄԱՆԿԱՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ընդհանուր բնութագիր: Դիմանկարը գեղանկարում, գրաֆիկայում և լուսանկարչության մեջ կոնկրետ մարդու կամ մարդկանց խմբի պատկերումն է: Ժանրի առաջնահերթ խնդիրն է պատկերել մարդու բնորոշ դիմագծերը, նմանությունը: Նկարիչը միաժամանակ պատկերվողի դեմքի մեջ բացահայտում է նրա ներաշխարհը, ազգային ու հասարակական պատկանելիությունը:

Դիմանկարի ժանրը ներկայացնում է ժամանակակից մարդկանց կերպարներ: Լավագույն դիմանկարներում, որտեղ կերպարները ընդհանրացված, տիպականացված են, տալիս են որոշակի գաղափար տվյալ դարաշրջանի հասարակական-քաղաքական, այս կամ այն խավի ներկայացուցչի բնորոշկողմերի մասին: Այսպիսով դիմանկարչությունը ներկայացնում է ինչպես որոշակի մարդկային անհատականություն, այնպես էլ ընդհանրական կերպարներ: Դիմանկարները մեծ մասամբ լինում են մեկ մարդու պատկեր, իսկ այն կտավներում, ուր պատկերված են երկու և ավելի մարդիկ կոչվում է խմբանկար կամ խմբային դիմանկար: Դիմանկարի ամենատարածված տեսակը ինքնանկարն է, այսինքն՝ այն դիմապատկերը, որի մեջ նկարիչը պատկերել է ինքն իրեն: Դիմանկարը մարդկանց պատկերում է տարբեր դիրքերով. այն կարող է լինել միայն գլուխ, մինչև կուրծքը, գոտկատեղը, ամբողջ հասակով կանգնած կամ նստած դիրքով: Այնուամենայնիվ, բոլոր դիմանկարներում անհատական թե խմբակային նկարչի խնդիրըմնում է նույնը՝ բացահայտել մարդկանց բնորոշ տիպական գծերն ու անհատականությունը: Ուստի առանձին դիմանկարներում, որոնց մեջ խորապես բացահայտված են անհատականություններ, նրանք տալիս են նաև ընդհանուր պատկերացում տվյալ դարաշրջանի մարդկանց, նրանց վարք ու բարքի և հասարակական կյանքի մասին:

Դարերի ընթացքում ժանրն ունեցավ իր բազում ելևէջները՝ ընդհուպ մինչև ստրուկտուալ քայքայումը: Սակայն բոլոր պարագաներում դիմանկարի կարևորագույն խնդիրներն են՝ նմանությունը, հոգեբանական վերլուծությունը, տարածականությունը: Միշտ չէ, որ այս երեքը առկա են մեկ դիմանկարում, այս առումով դարաշրջանները թելադրում են իրենց պահանջները, սակայն սրանցից գոնե մեկը դիմանկարի մեջ պետք է լինի:

Դիմանկարի համար բնորոշ է աշխույժ, հանգիստ, զննող մարդը, ենթադրում է բնութագրի տարբեր համադրում – սոցիալական վիճակը, ազգությունը, տարիքը, բնավորությունը, կրոնական և բարոյական հատկությունները: Դիմանկարում մտահոգված

անձը պատկերված է արտաքինից՝ գլխավորը՝ այստեղ՝ հոգու հայելին է՝ դեմքը, իսկ դեմքի վրա – աչքերի արտահայտությունը: Հայացքը սևեռված է հեռու կամ գնում է հոգու խորքը:

1.1 ԴԻՄԱՆԿԱՐԻ ԺԱՆՐԸ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐՈՒՄ

Դիմանկարը կերպարվեստի ամենահին ժանրերից է: Ժանրի առաջին նմուշները թվագրվում են 27 հազար տարվա վաղեմության: Ժանրի արդեն կայացած դրսևորումները եղան եգիպտական Ֆայում քաղաքում Ք.ա. 1-ին դ.-ում՝ հելլենիզմի շրջանում: Իսկ մինչ այդ Հին Եգիպտոսում դիմանկարը լայն տարածում էր գտել՝ հիմնականում կրելով պաշտամունքային նշանակություն: Այստեղ դիմանկարը կատարվում էր հստակ կանոններով, որոշ գործերում անգամ ռեալիստական բնութագրումներով Հին հույների մոտ սկզբնական շրջանում որպես այդպիսի դիմանկարը գոյություն չի ունեցել, այսինքն՝ դիմանկարի կոնկրետության խնդիրը դեռևս հասունացած չէր, և կերպարները հառնում էին ընդհանրական մարդկանց գծերով: Գեղանկարչական դիմանկարներ շատ չեն պահպանվել: Դրանց մասին որոշակի պատկերացում են տալիս 1-3-րդ դդ. ֆայումյան դիմանկարները, որոնք կոչվել են տվյալ վայրի՝ Եգիպտոսի արևելյան հռոմեական նահանգի էլ-Ֆայում օազիսի նեկրոպոլի անունով, ուր գեղանկարչական դիմանկարը զարգացնում էր հելլենիստական-հռոմեական ազդեցությամբ: Սրանք մակերեսային փայտե սալերի վրա կատարված պատկերներ են, որոնք թաղվել են մահացածների հետ և կոչված են եղել հավերժացնելու մահացածի կերպարը: Նմանությունն ապշեցուցիչ է և առավել արտահայտիչ են աչքերը: Հռոմեական դիմաքանդակը, գումարվելով ֆայումյան դիմանկարին, հիմք հանդիսացան ·դիմանկար· հասկացության ծավալմանն ու զարգացմանը կերպարվեստում:

Միջնադարում դիմանկարի դերն ու նշանակությունը նվազում է Եվրոպական արվեստում, տեղի է ունենում ժանրի անկում: Դա կապված է ժամանակաշրջանի համընդհանուր աշխարհընկալումից: Միջնադարյան նկարիչը հազվադեպ էր անդրադառնում այս ժանրին, քանի որ ենթարկվում էր եկեղեցական խիստ կանոններին: Շատ, թե քիչ դիմանկարի ժանրը առաջխաղացում է ապրում 10-12-րդ դդ.՝ գոթական, ռոմանական ոճերի ասպարեզ գալուն համընթաց:

Այս ժամանակահատվածում Չին նկարիչները ստեղծել են բազմաթիվ վառ անհատականացված դիմանկարներ, հիմնականում բարձր հասարակության ներկայացուցիչների, ուր շեշտը դրվում էր ինտելեկտի արտահայտմանը: Դիմանկարի

յուրօրինակ նշումներ են պահպանվել Հնդկաստանում, Ասիական երկրներում, այդ թվում նաև Հայաստանում:

Դիմանկարի ժանրը իր երկրորդ շունչը ստացավ Վերածննդի դարաշրջանում: Սկզբնական փուլում վերականգնվեց կիսադիմային սկզբունքներով՝ առավել ընդգծելով կիսադեմի ուրվագիծը: Իսկ քիչ ավելի ուշ, երբ նվաճված էր մարմնի ծավալային մշակումների գաղտնիքը, դիմանկարը դարձավ դիմային և զարգացավ հիմնականում բարձր վերածննդի վարպետների մոտ (Լեոնարդո դավինչի, Տիցիան, Ռաֆայել և այլն):

Կարևոր ձեռքբերումներից էր յուղաներկի, հաստոցային գեղանկարչության իհայտ գալը, որը թույլ էր տալիս նկարչին ավելի ազատ ստեղծագործել: · Մոնա-Լիզա · -յի դիմանկարը, որը համարվում է աշխարհի ամենանշանավոր դիմանկարը հենց վերածննդի արգասիքն է:

16-րդ դարի Եվրոպական նկարչության մեջ մեծ տարածում է գտնում խմբակային դիմանկարը, ձևավորվում է նաև պատմական դիմանկարի ժանրը: Դիմանկարչության մեջ այս շրջանի խոշոր ներկայացուցիչն էր ազգությամբ հույն, բայց իսպանացի նկարիչ Էլ Գրեկոն:

17-րդ դարում դիմանկարը հասավ իր բարձրակետին, հատկապես նիդեռլանդներում, ուր գեղանկարչությունը զարգանում էր երկու դպրոցներում՝ հոլանդական և ֆլամանդական: Այս շրջանում դիմանկարի ժանրը առաջնայինն էր, իսկ տեխնիկան գնալով կատարելագործվում էր՝ նկարիչներին ընձեռնելով լայն հնարավորություններ:

Կլասիցիզմի ազդեցության ներքո 19-րդ դարում դիմանկարը դառնում է առավել խիստ, կանոնակարգված, սառը: Գլուխ է բարձրանում ռեալիստական դիմանկարը՝ Կուրբե, · Պերեդվիժնիկներ · և այլն: Կուրբե - · Վիրավոր մարդը · `

Դիմանկարի ժանրի պատմության մեջ վճռորոշ նշանակություն ունեցավ լուսանկարչության ասպարեզ գալը: Լուսանկարչության հանդեպ գնալով մեծանում էր հետաքրքրությունը, իսկ դիմանկարի ժանրը գնալով կորցնում էր իր դիրքերը: Այսպես կոչվածն «Լուսանկարչական դիմանկար»-ը արվեստաբանների, քննադատների կողմից չի ընդունվում որպես բարձրարժեք ստեղծագործություն, պարզաբանելով, որ առանց բնորդի անմիջական մասնակցության, բնորդին տարբեր դիրքերից առանց մանրամասն ուսումնասիրման ոչ մի իրական բարձրարժեք գեղարվեստական ստեղծագործություն չի կարող լինել: Հիմնականում լուսանկարները իրենցից ներկայացնում են մարդու դիմագծերի, արտաքին տեսքի միայն մեխանիկական արտացոլանքը, առանց բնավորության, խառնվածքի, էմոցիաների փոխանցման:

19-20-րդ դդ. առաջ են գալիս մի շարք ավանգարդ, այսպես կոչված մոդեռն ուղղություններ, հոսանքներ, ինչի արդյունքում հետին պլան են մղվում կերպարվեստի գրեթե բոլոր ժանրերը (Պիկասսո, Մոդիլյանի, Մատիս և այլոք): Շատ նկարիչներ, այնուամենայնիվ ձգտում են պահել ռեալիստական դիմանկարի ժանրի դերը, սակայն 50-ականներից հետո առավելապես աճում է հետաքրքրությունը աբստրակտ արվեստի նկատմամբ:

60-70-ականները նշանավորվեցին փոփ-արտ նոր ուղղության հաղթանակով: Այս շրջանի «Մոնա-Լիզան» դարձավ Էնդի Ուորհելի «Մերլին Մոնրոյի» դիմապատկերը, որը դարձավ իկոնա: Սակայն սա շատ հեռու էր այն դիմանկարից, որն ընդունված էր նախորդ դարաշրջաններում:

Ժամանակակից մշակույթը և նրա զարգացումն անհնար է պատկերացնել առանց տեխնիկայի, քանի որ ժամանակակից արվեստի տեսակների մեծ մասն այժմ ծառայում են առավել լայն մասսաների համար, ինչը կապված է հեռուստատեսության, ռադիոյի, ինտերնետի և ինֆորմացիոն այլ աղբյուների հետ:

Այսպիսով, կարող ենք ասել, որ ժամանակակից արվեստում ժանրային գեղանկարչությունը մահացած է, սակայն չպետ է մոռանալ, որ ցանկացած ժամանակաշրջան ունի իր բնորոշ արժեհամակարգը և դրանով էլ զբաղեցնում է իր յուրահատուկ տեղը համաշխարհային արվեստի պատմության մեջ:

1.2 ԴԻՄԱՆԿԱՐԻ ԺԱՆՐԸ ՀԱՅ ԿԵՐՊԱՐՎԵՍՏՈՒՄ

Հայ կերպարվեստում դիմանկարն ունեցավ իր հետևողական զարգացումն: Եզակի են միջնադարում ստեղծված դիմանկարները (Գագիկ Առաջինի արձանը 9-րդ դ., 13-14-րդ դդ. մանրանկարներում հանդիպող դիմանկարներն և այլն): 17-18-րդ դդ. հայկական կերպարվեստում նկատվող միտումները իրենց հետքն են թողել նաև դիմանկարի վրա, որի լավագույն օրինակները հանդիպում են ինչպես բուն հայաստանում, այնպես էլ հայաստանից դուրս: Հայ կերպարվեստում ժանրերը սկսեցին ձևավորվել միայն 19-րդ դարից ընդհուպ մինչև 20-րդ դարի սկիզբը: Հայ արվեստն ընդանում էր միջնադարյան զարգացումների ներքո և միայն 19-րդ դարից տեղի ունեցավ կենցաղի և մտածողության աշխարհընկալումը: Քանի որ այս շրջանում արևելյահայությունը կենտրոնացած էր Թիֆլիսում, հենց այստեղ էլ զարգացում ստացավ ժանրային տարրաբաժանումը: Հայ կերպարվեստում դիմանկարի ժանրի հիմնադիրն էր Հակոբ Հովնաթանյանը: Նա Հովնաթանյանների մեծագույն տոհմի վերջին ներկայացուցիչն էր, որն իր մեջ ամփոփեց տոհմի հանճարը և սկիզբ դրեց հայ կերպարվեստի նոր դարաշրջանին: Նա առաջինն էր, որ ստեղծեց դիմանկար, որ անդրադարձավ հաստոցային չափին, որ ստեղծեց աշխարհիկ բովանդակությամբ պատկեր:

Հայ կերպարվեստում դիմանկարի ժանրին շատ նկարիչներ են անդրադարձել, բայց ակնառու դեմքերից է Ստեփանոս Աղաջանյանը: Նրա դիմանկարները և սուր տիպաժային են, և ընդհանրական: Կերպարներն օժտված են ռեալիզմի լավագույն ավանդույթներով:

20-րդ դարում դիմանկարչության բնագավառը վերելք ապրեց Սարյանի արվեստում: Վերջինիս կերպարները օժտված են խոր հոգեբանականությամբ, ներքին և արտաքին աշխարհների համահունչ համադրությամբ:

Որպես առանձնահատուկ կարևորություն ունեցող կերպարվեստի ժանր, դիմանկարչությունը, ի տարբերություն միուսների ավելի մեծ պատմություն ունի: Երբեմն առաջնական տեղ զբաղեցնելով, երբեմն ետ մնալով մյուսներից՝ դիմանկարչությունն արվեստի պատմության ողջ ընթացքում շարունակել է իր գոյությունն:

Դիմանկարի գլխավոր նպատակն է ցույց տալ տվյալ մարդու անհատական առանձնահատկությունները, սակայն դիմանկարչությանն բնորոշ են նաև այս կամ այն աստիճանի ընդհանրացումները: Որքան խորն է դիմանկարի անհատական նմանությունն, որքան ընդգրկուն է բացահայտված պատկերվածի անձնավորությունը, այնքան ավելի շատ է այն պարունակում ընդհանուրին վերաբերող պատկերացումներ:

Մարդու անհատականության արտացոլումը գեղանկարչի համար կենտրոնական խնդիր է հանդիսանում նաև այն դեպքում, երբ նա աշխատում է խմբային դիմանկար վրա:

Սովորաբար խմբային դիմանկար կերտելիս՝ արվեստագետը մի խումբ մարդկանց մասին պատկերելը արդարացնելու համար ընտրում է որևէ ժանրային սյուժե, սակայն այս դեպքում գրության մեջ են:խնդիրն էլ արտաքին և ներքին նկարագրության մեջ է: Դիմանկարչության ժանրի սիրսծ տեսակներից է ինքնադիմանկարը՝ նկարչի կողմից ստեղծած իր իսկ պատկերը:

Ինքնադիմանկարում նկարիչը հաճախ անկեղծորեն արտահայտում է սեփական վերաբերմունքն իր իսկ անձի նկատմամբ, ցույց է տալիս մարդկայինն ու ստեղծագործականն իր կերպարում բացահայտում է հոգեկան տարաբնույթ վիճակները, գնահատում՝ անհատական՝ ստեղծագործական սկզբունքներն ու համոզմունքները:

Դիմանկարը պատկերում է մարդկանց տարբեր դիրքերով, այն կարող է լինել միայն գլուխը, մինչև կուրծքը, գոտկատեղով և այլն: Բոլոր դիմանկարներում թե անհատական, թե խմբակային, նկարչի խնդիրն մնում է նույնը, բացատրել մարդկանց բնորոշ տիպական գծերն ու անհատականությունը: Այդ պատճառով առանձին դիմանկարներում, որոնց մեջ խորապես բացահայտված են արտահայտչականությունները, դրանք տալիս են նաև ընդհանուր պատկերացում տվյալ դարաշրջանի մարդկանց, տվյալ դարաշրջանի վարք ու բարքի մասին:

Լավագույն դիմանկարների միջոցով նկարիչը կարողանում է բնութագրել, ոչ միայն պատկերվող մարդու դիմագծերը, այլև նրա ապրած ժամանակաշրջանը:

Աշխատելով դիմանկարի վրա նկարիչը ոչ միայն օբյեկտիվորեն է բնութագրում այս կամ այն մարդուն, այլ արտահայտում է իր վերաբերմունքը նրա նկատմամբ ու ձգտում է դիմանկարի միջոցով իր զգացմունքները ներշնչել դիտողին: Նկարչի վերաբերմունքի մեջ ամփոփված են ոչ միայն անձնական զգացմունքները, այլև նրա գեղագիտական և հասարակական իդեալները: Դիմանկարչից-արվեստագետը իզորու է նսեմացնել բնորդին կամ արտահայտել իր հիացումը, սերը կամ արհամարանքն ու ատելությունը նրա նկատմամբ: Նկարիչը կարող է ընդգծել պատկերված անձնավորության ողջ հատկությունն և հակառակը՝ սքողել, թաքցնել միյուսները:

Դիմանկարի ժանրը մեծ վերելք ապրեց վերածննդի դարաշրջանում, երբ որ հաստատվեց հումանիստական գաղափարախոսությունը: Այդ ժանրի խոշորագույն ներկայացուցիչներն են վերածննդի ներկայացուցիչներ՝ Լեոնարդո Դա Վինչին և Ռեմբռանդտը Վան Ռեյը:

Հայաստանում դիմանկարի ժանրի հիմնադիրն է Հակոբ Հովնաթանյանը հայտնի դիմանկարի շարքով՝ ·Շուշանիկ Նադիրյան·, ·Ներսես Աշտարակեցի· և այլն: Հակոբ Հովնաթանյանը Հովնաթանյան նկարչական տոհմի առավել օժտված և ամենից ինքնատիպ նկարիչն է: Հովնաթանյանի աշխատանքները սովորաբար փոքրադիր, կամերային

դիմանկարներ են, որոնցում մարդիկ ներկայանում են մինչև ծնկները կամ գոտկատեղը՝ երեք քարորդով դեպի մեզ շրջված, սևեռուն հայացքը դիտողին ուղղված:

Նրանց ֆիգուրները հստակորեն ուրվագծված են չեզոք գույներով երանգավորված հենքերի վրա: Կանայք հաճախ պատկերվում են բազկաթոռի մեջ՝ ձեռքերում թաշկինակ կամ համրիչ բռնած: Մեծագույն բարեխղճությամբ, սիրով և վարպետությամբ է նկարիչը վերարտադրում նրանց թավշյա մուգ զգեստները, գունագեղ ու վառ դրվագումները, արծաթաթելերով ասեղնագործված նեղ երիզները, ատլասե բարակ, երկար գոտիները, մարգարիտներով կամ գնդասեղներով զարդարված գլխանոցները, շղարշե թեթև, թափանցիկ քողերն, ինչպես և ականջողերի, մատանիների թանկարժեք փայլը:
Իսկ տղամարդիկ ներկայանում են կանգնած ·Արժանապատիվ· կեցվածք ընդունած՝ աջ ձեռքով գոտիներից կառչած, ձախը՝ հետ քաշած ու մեջքին դրած:

Լեոնադո Դա Վինչիի Մոնա Լիզա դիմանկարը

Հակոբ Հովնաթանյան Շուշանիկ Նադիրյանի

Խոսելով դիմանկարների մասին չենք կարող չհիշատակել Լեոնադո Դա Վինչիի Մոնա Լիզա ·Ջոկոնդա· դիմանկարի՝ համաշխարհային գեղանկարչության ամենափառաբանված ստեղծագործություններից մեկի մասին:

Արտասովոր կնոջ բարեկերպորեն մշակված, ստվերանկարներով ինքնապարփակ, վեհասքանչ պատկերն իշխում է հեռավոր, բաց կապույտ մշուշով ծածկված ժայռերում գալարվող գետակներով բնանկարի վրա: Բարդ կիսաերևակայական բնանկարը նրբորեն

ներդաշնակվում է պատկերահանվողի բնավորության և բնականության հետ: Թվում է, թե բուն կյանքի անկայուն փոփոխություն է զգացվում նրա հազիվ նկատելի ժպիտով աշխուժացած դեմքի արտահայտության մեջ, նրա հանգիստ, վստահ խորաթափանց հայացքում: Պատրիկուհու դեմքը և փափկասուն ձեռքերը պատկերված են զարմանալի զգուշավորությամբ, մեղմությամբ: Լուսաստվերների նրբին, ասես ահեղացող շղարշն որ պատերն է մեղմացնում էր ուրվագիծը և ստվերները, նրանում չկա ոչ մի կտրում վրձնահարված կամ անհարթ ուրվագիծ:

Բարձրատոհմիկ պալատականների շքեղ դեկորադիվ գեղեցկությամբ ներթափանցված դիմանկարչությունը բնորոշ է ֆրանսիական արվեստին: Միաժամանակ 18-րդ դ. դիմանկարչության մեջ ծագում և հաստատվում է լուսվորության հումանիստական գաղափարներից սնվող՝ նոր ռեալիստական դիմանկարչությունը, որը բացահայտում է մարդու հոգեվոր հարստությունն ու գեղեցկությունը, բարոյականությունն ու հասարակական պիտանելիությունը: 19-րդ դարում դիմանկարչական ժանրը հարստանալով հեղինակային անհատական եղանակներով, յուրովի է արտացոլվում ժամանակաշրջանի գեղարվեստական ուղղություններեում՝ ռեալիզմ, ռոմանտիզմ, ակադեմիզմ և առանձնահատուկ թովչանք ստանում իմպրեսիոնիստներին սքանչելի ստեղծագործություններում, Զարմանալի լարվածություն և անհատական ոճի կնիք ձեռք բերում պոսիմպրեսիոնիստների՝ հատկապես Վինսենտ Վան Գոգի մետ: Եվրոպական երկրների դիմանկարչությունը ընթանում է բարդ և հակասական ուղիներով. Մոդեռնիզմ և պեստմոդեռնիզմը տանում են դիմանկարչությունը դեկորատիվության, պայմանականության և վերացական հասկացությունների ճանապարհով, իսկ ռեալիստական ուղությունն փորձում է նորոգել դիմանկարի արտահայտամիջոցները և մարմնավորել բուռն ու հակասական շրջանի մեջ ապրող մարդու իրական կերպարը: Դիմանկարչական ժանրի բազմաձև դրսևորումները, ներառելով անցյալի և ներկայիս բոլոր գեղարվեստական հոսանքների առանձնահատկությունները, առանձնապես առատ են դառնում 20-րդ դարի վերջում և մեր ժամանակներում :

1.2 ԿԱՏԱՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համաշխարհային գեղանկարչությունը հարուստ է դիմանկարի գեղարնկարչական պատկերման լավագույն օրինակներով, որը հանդիսանում է նկարիչների ստեղծագործության թեման և հիմնական բովանդակությունը: Գեղանկարիչները մարդու դեմքի պատկերման խնդրին անդրադարձել են տարբեր ժամանակներում և ստեղծել

բազմաթիվ կտավներ, որոնցում հասել են կատարողական բարձր վարպետության, լուծել են ստեղծագործական ու հոգեբանական բարդ խնդիրներ:

Ստեղծագործական խնդիրները դիմանկարում բարդ են և չափազանց հետաքրքիր: Նկատի ունենալով այն, որ մարդը զանազան իրավիճակներում իրեն տարբեր կերպ է դրսևորում, անհրաժեշտ է, դիմանկարի վրա աշխատելիս ձգտել ոչ միայն հասնելու զուտ մանրամասների նմանության, այլև կտավին փոխանցել տվյալ անձնավորության հոգեկան բնութագիրը:

Դիմանկար նկարելու առաջին առաջրանքի համար ցանկալի է ընտրել միջին տարիքի բնորդ, լավ արտահայտված դիմագծերով: Ցանկալի է, որ միջավայրը լինի չեզոք և լուսավորված ցերեկվա լույսով: Դիմանկարի գեղանկարչական պատկերման հիմնական էտապներից է ոչ մեծ նախնական էտյուդը: Այդ էտյուդներում հեշտությամբ կարելի է տալ բնորդի խառնվածքը:

Հիմնական առաջադրանքի կատարման համար ընտրում ենք նկարին համապատասխանող կտավ, որոշում ենք երկարությամբ թե լայնությամբ է տեղադրվելու առաջադրանքը և ապա կատարում գծանկար առաջադրանքից:

Հաջորդ փուլը նախանկարն է: Ներկերի կիսաթափանցիկ շերտերով ծածկում ենք նկարի մուգ մասերը: Հենց սկզբից անհրաժեշտ է հաշվի առնել տոնային խնդիրները և լուսա-ստվերային հարաբերությունների ուժը:

Նախանկարի չորանալուց հետո նկարիչը կատարում է ետյուդ: Այս ընթացքում անհրաժեշտ է ծածկել կտավի ամբողջ մակերեսը:

Էտյուդ կատարելուց հետո անցնում ենք մանրամասնությունների մշակմանը: Մեր ամենակարևոր խնդիրն է գտնել տվյալ բնորդին բնորոշ լոկալ գույնը:

Դիմանկարում պատկերվում է արտաքին պատկերը, որի միջոցով երևում է ներքին աշխարհը, մարդը լռում է, բայց այդ լռությունը խորիմաստ է, որի միջոցով արտահայտվում է տվյալ անձի տրամադրությունը՝ ուրախություն, բարկություն և այլն: Դիմանկարի ընդհանուր թեման դա մարդու անհատական կյանքն է:

Ուսուցիչներիս առջև դրված կարևորագույն խնդիրներից մեկը սովորողների կրթական կարիքների բացահայտումն է:

Ուսուցչի համագործակցությունը աշխատանքային ընկերների հետ, փորձի փոխանակումը և մասնագիտական գործունեությունը նպաստում են ուսուցման մակարդակի բարձրացմանը: Թեմայի կարևորությունը խիստ ժամանակակից է և փորձում է լուծել կրթության բնագավառում իմ առարկայի ուսուցման զարգացմանը նպաստող խնդիրները որոնցից և կարելի է ասել ամենակարևորներից է իմ համագործակցությունը իմ մյուս առարկաների դասավանդող ուսուցիչների հետ:

Պարզ ու ակնհայտ է, որ այս թեմայի անհրաժեշտությունը առաջացել է կրթական բնագավառի զարգացմանը զուգահեռ: Մեզ՝ ուսուցիչներիս համար շատ կարևոր է դրանց բացահայտումը և կրթական կարիքների բավարարման ուղիների մշակումը, նպատակների ձևավորումը, կրթական հետաքրքրությունների բացահայտումը: Դրանք շարժիչ ուժեր են՝ մոտիվացիոն մեխանիզմներ, որ դրդում են աշակերտներին ավելի մեծ ոգևորությամբ մասնակցել դասերին և ուսուցիչներին՝ ավելի շատ համագործակցել գործընկերների հետ, կրթական կարիգները կերպարվեստի շրջանակներում բացահայտելուց և ազդեցությունը ուսումնասիրության վրա պարզելուց հետո ուսուցչի համար կարևոր է դառնում դասընթացի ճիշտ և գրագետ կազմակերպումը, որը պետք է հիմնված լինի կարիքների բավարարման, (տվյալ դեպքում գործընկերների համագործակցության) և կարիքների բավարարման ուղիների մշակման վրա:

Համագործակցելով մեր աշխատանքային գործընկերների հետ, մենք պետք է աշակերտին ընկալելի դարձնել կրթության արդիականացման հիմնական գաղափարներն ու արժեքները՝

- համագործակցություն,
- ազատությունը,
- արդարությունը,
- համերաշխությունը:

Իմ նպատակն է այս հետազոտական աշխատանքի միջոցով առաջարկվող հնարների միջոցով ուսուցանվող նյութը մատուցել ավելի հետաքրքիր, կանչել օգնության գործընկերների մեթոդներին, խրախուսելով քննադատական միտքը աշակերտների շրջանում: Իմ փորձառու գործընկերները փորձում են իրենց աջակցությամբ և թարմ մեթոդների առաջարկությամբ հասանելի դարձնել կերպարվեստի ավելի արհեստավարժ ուսուցումը:

Կերպարվեստը իր դասավանդման յուրահատուկ տեսակներով ուսումնական բոլոր առարկաների հետ ունի սերտ կապ: Այս առարկան ունի հատուկ հնարավորություն աշակերտների մեջ բացահայտելու հոգևոր և մտավոր կարողություններ, հարստացնելու աշխարհայացքի ձևավորում:

Այս առարկայի հետ առնչվելը նպաստում է

- զգայական ընկալման ձևավորմանը, իրականության գիտակցական ընկալմանը
- ստեղծագործական և վերլուծական մտածողությանը
- մարդու գեղագիտական կրթությանը
- սովորողների գեղարվեստական կրթությանն ու դաստիարակությանը, բարոյական դաստիարակությանը



- ինքնաճանաչողությանը, ինքնաարտահայտմանն ու մտահորիզոնի զարգացմանը
- հայրենասիրության, ազգային արժեքների, մարդասիրության արժևորմանը

Այս առարկան ամենաշատն է շփվում մյուս առարկաների դասավանդման գործունեությունների հետ: Կերպարվեստի ուսուցումն իրականացվելու է համապատասխան նկարակալներով, դազգահին խմբային աշխատանքների միջոցով, տեխնիկապես հագեցած արվեստի սենյակներում, կամ դպրոցական արվեստանոցներում: Կան հասկացություններ որոնք ընդհանուր են տարբեր գիտությունների համար և օգնում են սովորողներին միավորելու, համագործակցելու տարբեր առարկաներից ձեռք բերած գիտելիքները աշխարհի մասին մեկ ամբողջական կարծիք ստեղծելու համար:

Իմ նպատակն է այս հետազոտական աշխատանքի շրջանակներում աշակերտներին հասանելի դարձնել դիմանկար ժանրի տիրապետման կատարողական բոլոր հնարքներին ու միջոցներին:



Կերպարվեստի գեղանկարչական կրթության արդիական հիմնական գաղափարներին ու արժեքներին: Առաջարկվող հնարքների միջոցով ուսուցանվող նյութը (տվյալ դեպքում դիմանկարի կատարումը գեղանկարչական հնարքների միջոցով) մատչելի, ավելի հետաքրքիր, ավելի ազատ, ավելի հոգևոր, դարձնել, քննադատական միտքը դարձնելով ավելի խրախուսելի, աշակերտների շրջանակում:

Թարմ մեթոդների կիրառությամբ փորձում եմ ավելի հասանելի դարձնել երեխաներին կերպարվեստի այդ համեմատաբար ավելի բարդ տեսակի կատարման մեջ հաջողության հասնելու համար ավելի արհեստավարժ ուսուցման եղանակներով ու հնարքներով: Ցանկացած դասապրոցեսի միջոցով կարելի է աշակերտներին հաղորդակից դարձնել այս ժանրի այս կամ այն հնարքին: Այս ժանրը իմ կարծիքով ամենա մոտն է կանգնած մարդուն և նրա ներքնաշխարհը ճանաչելու ամենանուրբ միջոցն է:

Արվեստի և կյանքի միջև կապեր ստեղծելու համար, ուսուցիչը պետք է երեխաների մոտ ձևավորի արվեստի տարբեր ժանրերի անընդհատ շրջապատող տարբեր արվեստների հետ գրագետ հաղորդակցվելու ունակություն:

Երեխաներին պետք է, անհրաժեշտ է բացատրել որ, արվեստների հետ գրագետ հաղորդակցվելու տարբեր հոգևոր անհրաժեշտություններ ու տեսակներ կան, որ արվեստի տարբեր ժանրեր, ունեն տարբեր հոգևոր և փոխաբերական արտահայտչամիջոցներ: Որպեսզի երեխաների համար ավելի հետաքրքիր լինի դիմանկարի կատարողականությունը, փորձում ենք մարդկային դեմքը վերածել խաղի: օրինակ, որ այնտեղ կարող է լինել կարգ ու կանոն և կարող է նույն ձևով լինել անկարգություններ: Այս փոքրիկ խաղը երեխաներին կարող է մղել շատ կարևոր բաների գիտակցմանը: Խաղը շարունակելի դարձնելու համար փորձեք այդ կարգ ու կանոնը և անկարգությունը տեղափոխել դիմանկարի տիրոջ հոգևոր աշխարհ: Թվում է թե այս փոքրիկ խաղը ոչինչ է, բայց այն կարող է երեխաներին տալ ազատություն, իրենց իմացածը, կարողացածն ու չկարողացածը հիմնավորելով կատարել հրաշալի դիմանկարներ, ցուցաբերելով անկաշկանդվածություն, վառ երևակայություն, ազատություն: Արժե ամեն մի աշխատանք էլ հորինվածք դիտել և ուսումնասիրել առանձին, կտեսնենք, թե ինչպես է ամեն ինչ հորինված խելամիտ և պատկերացրեք, ոչ ոք իր ստեղծագործությանը չի վերաբերվի ոչ հարգալից, տվյալ բնորդին չի դիտի որպես գեղեցկության էտալոնի կամ հակառակը նրա դիմագծերի ոչ կատարելի վիճակը նրան կարող է նույնիսկ հետաքրքիր թվալ: Սա կարևոր իրագործելի մեթոդաբանական հնարք է՝ եղանակ: Երեխաների աշխատանքներ մենք մշտական ցուցադրել ենք շաբաթական մեկ անգամ «Ամենաշնորհալին» ցուցանակի տակ, ցուցադրելով այնտեղ այդ շաբաթվա ամենահաջողված աշխատանքը: Դասապրոցեսի ժամանակ նկարում ենք «Իմ դասընկերոջ դիմանկարը»: Ամեն աշակերտ փորձում է պատկերել իր կողքի նստած դասընկերոջը: Իսկ հետո հարցադրում արվեց՝ Ինչպիսին ես տեսնում քո դասընկերոջը:

Պարբերական բացվող ցուցահանդեսները վերաբերվում են տարբեր առկա արդիական թեմաների «Մեր հերոսները», «Իմ ընտանիքը» և այլն: Վերջում, ցուցահանդեսի փակման ժամանակ քննարկում ենք լավագույն հաջողված աշխատանքները: Կազմակերպում ենք «Իմ սիրելի մայրիկ» – ցուցահանդեսը, նվիրված ամենասիրելիներին: Նկարների կողքին

լինում են ոտանավորներ, որոնք հորինում են իրենք երեխաները և գրում դիմանկարների կողքին:

Կյանքի հետ կապը գեղարվեստական կրթության բովանդակության ամենակարևոր կողմն է:

· Կյանքից՝ դեպի կյանք՝ արվեստի միջոցով · :

Արվեստի երևույթները պետք է աստիճանաբար օգնեն երեխային ավելի խորը զգալու և հասկանալու սեփական կյանքը, կապերը արտաքին աշխարհի, ընտանիքի, ընկերների, հասարակության, մարդկության և ամբողջ աշխարհի հետ: Երեխան պետք է աստիճանաբար հասկանա, մոտենա այն մտքին, որ արվեստը ոչ միայն պատկերում է մարդուն, ոչ միայն պատկերում կամ զարդարում է աշխարհը, այլ հաստատում է իր հարաբերությունները, իր վերաբերմունքը, իր ճանաչողությունը աշխարհի հետ: Երեխայի հոգում պետք է այս երևույթները օգնեն ավելի լավ ճանաչելու աշխարհը, իրեն շրջապատող մարդկանց, անհատներին, երևույթները և այդ մարդկանց ներքին և արտաքին արժանիքները կարողանա արտահայտել տարբեր նյութերի՝ ջրաներկ, գունավոր մատիտներ, ակռիլներ և այլն:

Դիմանկար կատարելու փորձերից մեկը կազմակերպեցինք հետևյալ կերպ: Որոշեցինք դիմանկարը կատարել լուսավոր գույներով, եթե նրանք բարի մարդկանց են պատկերում և մռայլ գույներով, եթե նրանք պատկերում են իրենց կարծիքով ավելի չար մարդկանց դիմանկարներ: Եվ խնդիրը պետք է կատարենք փազլների սկզբունքով:

Աշխատանքները ստացվեցին ուղղակի հոյակապ: Դիմանկարները կարծես արվեստի կատարյալ գործեր ստացվեցին: Պարզ դարձավ ազատության, երևակայության, համարձակության հրաշալի միաձուլումից ստացված փոքրիկների համարյա գլուխգործոցներ: Շատ հետաքրքիր աշխատանքներ եին, մեկը կազմված եր նուրբ գուներանգներից, մյուսը կրակոտ գույների փունջ էր հիշեցնում, մյուսը մտածել էր ավելի կոնտրաստային գույներով ընդգծելով դիմանկարի լույսն ու ստվերը: Այս վարժությունը շատ բան սովորեցրեց երեխաներին: Մոտենալ մարդկային դեմքին ոչ վախով և համաչափությունները պահպանելով նաև կատարել համարձակ նորարարություններ:

Տարրական դասարանների աշակերտների մոտ կարևորը հուզականությունն ու գեղարվեստական բովանդակությունն է: Նրանց չի հետաքրքրում համաչափությունների կարևորությունները, փոխարենը կարող են օգտագործել վառ գուներանգներ, մազերի, աչքերի, դեմքի պատկերման ժամանակ: Հետաքրքիր արդյունք է տալիս տարբեր գույնի մաշկ ունեցող մարդկանց դիմանկարների պատկերումը, տարբեր աչքերի կտրվածքով դիմանկարների պատկերումը:

Տարբեր գեղարվեստական և մանկավարժական խաղերն անփոխարինելի են երեխաների ստեղծագործական գործունեության բարձրացման, արվեստի նկատմամբ

նրանց ոգևորության, առարկայի նկատմամբ հետաքրքրության զարգացման և դասերի աշխուժացման համար: Այս խաղերի բնույթը կարող է միշտ տարբեր լինել:

Գեղարվեստական մանկավարժության ոսկյա օրենքներից մեկը դա երեխաներին ձուլվելն է: Այնպես անել, որ երեխան ստեղծագործելիս՝ լինի դա բնանկար, դիմանկար, թե պատկերացմամբ նկարչություն, անպայման այդտեղ նրանք գտնեն, տեսնե, պատկերացնեն իրենց: Նրանք միշտ, դերերի մեջ են, խաղի մեջ: Այս միջոցով նրանց մոտ ամեն ինչ ստացվում է իրական և սիրելի: ·Մեր հերոսները· ազատության և արդարության համար մղվող պայքարում մեր երեխաները մեր հերոսների մեջ տեսնում են իրենց, մեր ազգի անմնացորդ նվիրյալներին, նրանց մեջ տեսնում են հոգևոր գեղեցկության բոլոր դրսևորումները: Մենք գովաբանում ենք մեր հերոսներին, նրանց դիմանկարները պատկերելիս երեխաները առանձնահատուկ գույներ են ընտրում իրենց սերը արտահայտելու, իրենց վերաբերմունքը ցույց տալու գույնի և գծերի միջոցով: Հնագույն ժամանակներից սկսված դիմանկարը այն կարևոր ժանրն է, որի միջոցով արտահայտում ենք մեր զգացմունքները, փորձում արթնացնել դիմացինի կարեկցանք: Արվեստը ազդում է մեր զգայարանների վրա: Դիմանկարը արվեստի այն տեսակն է, որը երեխաները ամենաշատն են սիրում, նրանք սովորեցնում են մեզ իրենց նկարների միջոցով կարեկցել տխուր, հոգնած, հիվանդ մարդկանց և ուրախանալ, ժպտալ, թռչկոտել ավելի ուրախություն արտահայտող դեմքերի պատկերման ժամանակ:

Տատիկների և պապիկների դիմանկարի հանձնարարման ժամանակ փորձում ենք նրանց մոտ արթնացնել մարդու իմաստությունն ու կյանքի փորձը արտահայտել կնճիռներին իմաստություն հաղորդելու միջոցով, դրանք պատկերելով ամեն մեկը մեկ հետաքրքիր գուներանգներով և դրա միջոցով սիրելի մարդու ներաշխարհը կարողանալ արտահայտել, փորձելով ցույց տալ իրենց միասնությունը, ջերմությունը, միմյանց նկատմամբ իրենց հարաբերությունները:



Երեխաները պետք է հասկանան, որ արվեստը համախմբում է աշխարհը, երեխաներին, ողջ մարդկությանը: Եվ բոլորի համար ընդհանուր են գաղափարները, այլ ոչ թե արտաքին տարբերությունները և դիմանկարները պատկերելիս, առաջինը պետք է արտահայտենք մարդու ոչ թե անհատական այլ համամարդկային հատկանիշները:

Ցանկացած աշխատանք փորձում եմ երեխաների ուժերով ներկայացնել որպես կատարյալ արվեստի գործ: Երեխաներից նկարը վերլուծում է այն աշակերտը, որին այդ նկարը ամենաշատն է դուր եկել: Նա փորձում է հոգեբանական և տեխնիկական տեսանկյունից վերլուծել ու ներկայացնել տվյալ դիմանկարը, առանձնացնել նկարի արժանիքներն ու թերությունները, միաժամանակ պատճառաբանելով դրանք:

Յուրաքանչյուր ուսուցիչ կարգված է ուսուցանելու պետության կողմից առարկայական ծրագիրը: Այս ամենը կարելի է իրականացնել դասապրոցեսի միջոցով: Ամեն մի ուսուցիչ իրավունք ունի մասնակից լինելու նոր առաջարկներին, չափորոշիչների քննարկումներին: Այս ամենը թույլ է տալիս հայտնաբերելու նոր մեթոդներ, նոր միջոցներ ուսումնական պրոցեսը ավելի հասանելի դարձնելու: Բայց որքան էլ բարձրագույն մասնագիտական կրթությունը որակյալ լինի, այն չի կարող պատրաստել ուսուցիչներին հետագա ողջ մասնագիտական գործունեության ընթացքում մարտահրավերներին դիմանալու և հարափոփոխ պահանջները բավարարելու համար: Ուսուցչի մասնագիտական զարգացումը սահմանվում է որպես մասնագիտական ծրագրերի ու միջոցառումների ամբողջականություն, որը նպատակ ունի համալրելու նրա գիտելիքները, կարողությունները, հմտությունները, փորձությունները և մասնագիտական գործունեության անհրաժեշտ մասնագիտական ու անձնային այլ որակները: Ուսուցիչների մասնագիտական զարգացման գործընթացին առնչվող կարգավորումներում փոփոխություններ ու լրացումներ են կատարվել և շարունակվում են բարեփոխումները:

Ուսուցչի գործունեության արդյունավետոըթյան բարձացմանը նպաստում է ինքնակրթությունը, սովորողների ժամանակակից մտածողությունը, տեխնիկաներին տիրապետելու կարողությունները հմտությունները նրանց անվերջ կատարելագործումը, թարմացումը, հղկումը, նորացումը, ընտելացումը փոփոխություններին, կարողունակության բարձրացումը անընդհատ և արդյունավետ շփումները մյուս գործընկերների հետ նրանց փորձի օգտագործումը սեփական առարկայի դասավանդման արդյունավետության բարձրացման համար: Կարելի է կազմել աշխատախմբեր: Պետք է նկատել, որ այս ամենի կիրառումից ու ստրատեգիայի իրականացումից անպայման կբարձրանա ուսուցման որակը և գիտելիքների քանակը տվյալ առարկայից: Կբարձրանա նրա որակական գնահատականը իր աշակերտների և իր գործընկերների կողմից, դա էլ հենց կարող է ապահովել նոր որակով ուսումնական դասապրոցես:

Ժամանակը որում մենք ապրում ենք անշուշտ թելադրում է իր պահանջները՝ մասնաորապես հանրակրթության մեջ առաջադրելով ազատ, ստեղծագործող, բազմակողմանի զարգացած ու կենսունակ անձի խնդիրը: Այս ղնդիրն իր ընդհանրության մեջ կարող է լուծվել, եթե աճող սերնդի ուսումնադաստիարակչական գործընթացում իր առանձնակի դրսևորումն ունենար գեղարվեստական մանկավարժությունն իր բոլոր դրսևորումներով:

Ցանկացած ուսուցչի տրվում է ոչ միայն գիտելիք հաղորդելու հնարավորություն, այլ ստեղծելու հնարավորություն:

Մեր մեթոդները ավելի հասանելի դարձնելեւ համար, մեր առջև դրված խնդիրները լուծելու համար հարկավոր են համակարգիչ, դասագրքեր, դիդակտիկ նյութեր, ներկեր, թղթեր, մատիտներ, տեխնիկական սարքավորումներ: Դիմանկարներ կատարելու համար առաջարկում եմ երկրաչափական պատկերներով կատարել դրանք, իհարկե պահպանելով միայն դեմքի եզրագծերը: Փորձում եմ ներկայացնել կուբիստական նկարչությունը կապելով այն դիմանկարչության հետ:

Սովորեցնել սովորելու համար, սա է մեր հիմնական նպատակը, ահա ամենակարևորը ամեն ինչ նպատակաուղղել սովորեցնելու համար, մեր հմտությունները, կարողությունները, մեր իմացած ամեն մի գործընթաց, գործառույթ պետք է ծառայի սովորոցնելուն:

Դասապոցեսին ներդնելով ողջ դասավանդման հմտությունները, պետք է աշխատանքի մեջ պետք է աշխատանքային գործընկերների համագործակցության օգնությամբ (անատոմիա, կենսաբանություն, քիմիա) իրականացնել մեր սեփական գիտելիքները տվյալ առարկայից և միաժամանակ հնարավորինս կիրառել մնացած առարկաների դրական, օգտակար հատկանիշները:

Կրթության գործընթացը համարվում է մատչելի, եթե այն հասանելի չէ երեխայի գիտակցությանը, ապա այն չի կարող համարվել արդյունավետ, առավել ևս չի կարող համապատասխան որակ ապահովել: Նոր որակ ստանալու համար, հարկավոր է տիրապետել նոր էլեկտրոնային սարքավերումների, կիրառել նոր հնարքների բանեցում տրված գիտելիքների ամրապնդման համար: Ցանկացած ուսուցչի տրվում է ոչ միայն ուսուցանելու, այլև ստեղծելու և ստեղծագործելու հնարավորություն: Պետք է կարողանալ քննադատել սեփական կատարած նկարները: Կարողանալ վերլուծել, ճիշտ գնահատելու հմտություն ունենալ, կատարելագործվելու ցանկություն և կարողություն:

Ցուցահանդեսների ժամանակ ցանկացած առարկայից իմ գործընկերոջ կարծիքի քննարկում, անկողմնապահ ընդունում, ճշտելու, հստակեցնելու սովորողների իրավունքների պաշտպանությունը:



Կերպարվեստը որպես հանրակրթական առարկա կարևորվում է նրանով, որ այն զարգացնում է, կարևորում է երեխայի ընկալունակությունը: Այն հնարավորություն է տալիս երեխաներին, աշխարհը, մարդկանց տեսնել գեղեցիկը ընկալելու աչքերով, ձգտել հասնել հենց այդ գեղեցիկին:

Անհրաժեշտ է երեխաներին զինել գիտական գիտելիքներով, ծանոթացնել դիմանկարի առանձնահատկություններին: Դիմանկարի կատարման գիտելիքները նույնպես հաղորդում եմ մի քանի դասաժամի ընթացքում: Դիմանկարը կարելի է կատարել և գծանկարի, և գեղանկարի, և գրաֆիկայի և քանդակի միջոցով:

Անցյալում կերպարվեստի ամենաբարձր ծաղկման դարաշրջանները վկայում են, որ աշխարհի, մարդու արտացոլման, պատկերման (դիմանկար) լիակատարությունը հնարավոր է դառնում արվեստի բոլոր տեսակների միաժամանակյա ծաղկմամբ: Արվեստի մի ժանրը մյուսից տարբերվում է իր բովանդակությամբ, գեղարվեստական արտահայտման իր ձևերով ու միջոցներով, նյութով, պատկերաճանաչողությամբ, նրա ներգործությամբ, կենսական դերով: Արվեստի ամեն մի ժանր ընդունակ է ընդլայնելու իր ոլորտի և գեղարվեստական հնարավորությունների սահմանները:

Ցանկացած դիմանկարիչ ունի իր ուրույն ոճը: Պետք է տարբերել «նկարչի հնարքը» նկարչի ձեռագիրը: Ոճն արտացոլում է ժամանակակից կյանքը, այլ կերպ միանում է համաշխարհային արվեստի պատմական շղթային: Արվեստի իրական զարգացման ընթացքում ոճի շրջանակներում պայքար է տեղի ունենում տարբեր ուղղությունների միջև: Ուսուցման պրոցեսում պետք է երեխաներին տալ դիմանկար ժանրի մասին առաջադրանքներ, որը երեխաներին կզինի ոչ միայն նկարչական հմտություններով ու գիտելիքներով, այլև կամրապնդի կարը այլ ժանրերի հետ, օրինակ երբ դիմանկարի ֆոնը ետնանկար ունի բնանկարի տեսք: Դիմանկարը կարելի է կատարել տարբեր կերպարվեստի տեսակներով, ինչպես նաև տարբեր նյութերով: Իտալիայում, ԱՄՆ-ում հազվադեպ էր օգտագործվում պաստելը դիմանկարչության մեջ:

1895 թվականին հայտնվեցին նկարիչներ որոնք զբաղվում էին պաստելանկարչությամբ: Դրանց մեջ էին Դեգան, Ռոդենը: Այս դիմանկարները հավանություն տվեցին այս նյութին՝ պաստելին: Ֆրանսիացի Էդգար Դեգան օգտագործում էր այն ու նրա փայլուն վարպետն էր:

Ուսուցման պրոցեսում երեխաներին պետք է հաճախ տալ դիմանկարների տարբեր նյութերով առաջադրանքներ, որը երեխաներին կզինի ոչ միայն նկարչական հմտություններով ու գիտելիքներով այլև կամրապնդի մարդու հետ, նրա հոգեբանական





կերպարի հետ, նրան ավելի ճանաչելու միջոցի հետ: Կզարգանա հումանիզմը, ճաշակը, սեր դեպի մարդ արարածը: Դիմանկարները կարելի է կատարել ինչպես ջրաներկով, յուղաներկով, ածուխով այնպես պաստելով, սանգինայով, պաստելով և այլ նյութերով: Այս նյութերից ամեն մեկը ունի իր յուրահատուկ աշխատելու ծեխնիկան, որի հետ մենք աշակերտներին կարող ենք ծանոթացնել ու տեղեկացնել բարձր դասարաններում: Դիմանկարներ կարելի է կատարել ինչպես մոնումենտալ, այնպես էլ հաստոցային և մինյատյուրային չափերի մեջ: Օգտագործելով գիծ,գույն, լույս ու ստվեր՝ գեղանկարիչը իրականությունը վերարտադրում է դիմանկարի ողջ գունեղ հարստությամբ:

Գեղանկարչությունը որով ամենահաճախն են կատարվում դիմանկարները առաջ է բերում դիտողի մոտ առանձնահատուկ հույզեր, որպիսիք չի կարող ստեղծել ոչ մի այլ արվեստ: Այդ տպավորությունները ստեղծվում են գույնի, լույսի, ստվերի խաղերի որոշակի դասավորությամբ մի խոսքով այն ամենով ինչը կարելի է համարել նկարի երաժշտություն և գունային ներդաշնակություն: Գծանկարի միջոցով կատարված դիմանկարները, արթնացնում են այլ զգացմունքներ: Գծանկարը հանդիսանում է նարչության հիմքը: Այն մանկավարժի առջև դնում է լուրջ խնդիրներ, ճիշտ ու արդյունավետ դասավանդման համար: Կազմակերպելով երեխաների ցուցահանդեսները դրանով փորձում ենք նպաստել երեխայի ոգևորմանը, զարգացմանը և նրա հաղորդակցմանը արվեստի հետ:





Երեխաների հիշողությամբ նկարելու կարողությունը զարգացնելու համար, տալիս ենք հիշողությամբ նկարելու մայրիկների դիմանկարը:

Տարրական դասարաններում երեխաների մոտ պետք է լինի ազատ նկարչություն, որովհետև նրանց մանկական երևակայությունը պետք է զարգացնել հետագայում լավ գործեր ստեղծելու համար: Դիմանկարում մարդու բնավորության անկրկնելի



առանձնահատկության նրա արտաքին կապերի, հոգևոր կյանքի մասին բազմակողմանի պատկերացումները երբեմն զուգորդվում են կոնկրետ-պատմական գծերի բացահայտման հետ, որոնք պատկերացում են տալիս անձնավորության հասարակական հեղինակության մասին: Ինչ՞ է պետք գեղեցիկ դիմանկար ստեղծելու համար, նախ ճիշտ մոդելը՝ բնորդը, որը դուր է գալիս ձեզ: Այո այս պատկերի թեման պետք է իսկապես դուր գա: Իսպանացի նկարիչ Սալվադոր Դալին նկարել է իր կնոջը՝ Գալայի մի քանի դիմանկարները՝ սյուրալիստական սյուժե, թերևս ոչ բոլորն են հասկանում, բայց պարզ երևում է որ մոդելը նկարչի մոտ առաջացրել է ամենաջերմ զգացմունքները:

Մարդու դեմքը իրենից ներկայացնում է երկրաչափական կոնստրուկցիաներ: Մեզ անհրաժեշտ է հիմնական հմտությունների իմացություն և դրանց փոխանցումը երեխաներին: Դա անհրժեշտ է աչքերի, քթի, բերանի տեղերը ճիշտ հաշվարկելու և դեմքը համաչափ ու սիմետրիկ պատկերելու համար: Սա սկզբունքորեն այն ամենն է, որ պահանջվում է դիմանկարը կատարելու համար: Տղամարդկանց դիմանկարներում դեմքերը բավականին անկյունային են բայց դա ամենևին էլ չի նշանակում, որ դրանք նկարելը ճիշտ է: Սկզբունքորեն այս է ամենը: Պետք չէ խնայել թուղթ, ջանքեր: Սկզբում նկարել պետք է դեմքի ուրվագիծը, մինչև նրա ձևը ձեռք բերի ցանկալի ու նման ուրվագծերը: Սրա շնորհիվ կարելի է հասկանալ, թե ինչպես կարելի է գծանկարի միջոցով քայլ առ քայլ նկարել դիմանկարը առանց ավելորդ դժվարությունների: Դա պարզապես պրակտիկայի խնդիր է:



Կնոջ դիմանկարում գծերն ունեն ավելի հարթ կորեր, այստեղ չպետք է սուր անկյուններ գծել, եթե տղամարդու դիմանկարում նման հատվածները տղամարդկություն են ավելացնում, ապա աղջիկների և կանանց մոտ դրանք ավելորդ կոպտություն կավելացնեն դեմքին: Ինչպես արդեն պարզեցինք դեմք նկարելու համար հարկավոր է սիրել երկրաչափությունը, ինչպես նաև գաղափար ունենալ համամասնությունների մասին: Պարզապես համամասնության պահպանման մասին կքնարկվի հետագայում: Անատոմիայի

որոշակի առանձնահատկություններ շատ օգտակար կլինեն դիմանկարներ ստեղծելու գործընթացում:

-եթե աչքի կեսին հորիզոնական գիծ էք գծում, ապա այն պետք է հավասար լինի աչքերի միջև հեռավորությանը:

-եթե վերին և ստորին շրթունքների միջև գծեք նույն գիծը, ապա այն հավասար կլինի աչքերի միջև եղած հեռավորությանը:

Դիմանկարի թերությունները տեսնելու համար նկարը մոտեցնել հաելուն և նայել արտացոլանքին, բոլոր սխալները պարզ կերևան: Բացի ընդհանուր ուրվագծից անհրաժեշտ է օգտագործել ծավալային գրաֆիկա՝ լույսի և ստվերի խաղ: Դա անհրաժեշտ է կատարել, որպեսզի հարթ պատկերը «կյանքի կոչվի» և առավել իրատեսական տեսք ունենա:

Այնուամենայնիվ երեխաները պետք է տիրապետեն այս տեխնիկային, որպեսզի կարողանան պատկերել մարդկանց դիմանկարները: Նախքան դիմանկար պատկերելը մենք պետք է պարզենք թե ինչ է դիմանակարչությունը: Հիմնականում սա գլխի պատկերն է գլխից մինչև ուսերը: Դիմանկարը կարելի է նկարել պարզ ներկերով՝ մատիտներով, պաստելով, ածուխով: Բայց, քիչ թե շատ իրատեսական և բուն դիմանկարին մոտ լինելու համար հարկավոր է պարապել, մենք պետք է կատարենք 50-100 նկար:

Ուսուցման գործընթացը իրագործելու համար աշխատում է ողջ ուսուցչական կազմը՝ փոխանակելով, համագործակցելով սեփական փորձը միուս առարկաների հմտությունների

հետ: Կրթության գործընթացը համարվում է մատչելի, եթե այն հեշտ է յուրացվում աշակերտի կողմից: Եթե այն հասանելի չէ երեխայի գիտակցությանը, ապա այն չի կարող համարվել արդյունավետ, առավել ևս չի կարող





համապատասխան կրթական որակ ապահովել:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Դիմանկարի ժանրը ներկայացնում է ժամանակակից մարդկանց կերպարներ: Լավագույն դիմանկարներում, որտեղ կերպարները ընդհանրացված տիպականացված են, տալիս են որոշակի գաղափար տվյալ դարաշրջանի հասարակական-քաղաքական, այս կամ այն խավի ներկայացուցչի բնորոշ կողմերի մասին: Այսպիսով դիմանկարչությունը ներկայացնում է ինչպես որոշակի մարդկային անհատականություն, այնպես էլ ընդհանրական կերպարներ: Դիմանկարները մեծ մասամբ լինում են մեկ մարդու պատկեր, դիմանկարը մարդկանց պատկերում է տարբեր դիրքերով. այն կարող է լինել միայն գլուխ, մինչև կուրծքը, գոտկատեղը, ամբողջ հասակով կանգնած կամ նստած դիրքով: Այնուամենայնիվ, բոլոր դիմանկարներում անհատական թե խմբակային նկարչի խնդիրըմնում է նույնը՝ բացահայտել մարդկանց բնորոշ տիպական գծերն ու անհատականությունը: Ուստի առանձին դիմանկարներում, որոնց մեջ խորապես բացահայտված են անհատականություններ, նրանք տալիս են նաև ընդհանուր պատկերացում տվյալ դարաշրջանի մարդկանց, նրանց վարք ու բարքի և հասարակական կյանքի մասին:

Հայ կերպարվեստում դիմանկարն ունեցավ իր հետևողական զարգացումն: Եզակի են միջնադարում ստեղծված դիմանկարները (Գագիկ Առաջինի արձանը 9-րդ դ., 13-14-րդ դդ. մանրանկարներում հանդիպող դիմանկարներն և այլն): 17-18-րդ դդ. հայկական կերպարվեստում նկատվող միտումները իրենց հետքն են թողել նաև դիմանկարի վրա, որի լավագույն օրինակները հանդիպում են ինչպես բուն հայաստանում, այնպես էլ հայաստանից դուրս: Հայ կերպարվեստում ժանրերը սկսեցին ձևավորվել միայն 19-րդ դարից ընդհուպ մինչև 20-րդ դարի սկիզբը: Հայ արվեստն ընդանում էր միջնադարյան զարգացումների ներքո և միայն 19-րդ դարից տեղի ունեցավ կենցաղի և մտածողության աշխարհընկալումը: Քանի որ այս շրջանում արևելյահայությունը կենտրոնացած էր Թիֆլիսում, հենց այստեղ էլ զարգացում ստացավ ժանրային տարրաբաժանումը:

Դիմանկարի գլխավոր նպատակն է ցույց տալ տվյալ մարդու անհատական առանձնահատկությունները, սակայն դիմանկարչությանը բնորոշ են նաև այս կամ այն աստիճանի ընդհանրացումները: Որքան խորն է դիմանկարի անհատական նմանությունն, որքան ընդգրկուն է բացահայտված պատկերվածի անձնավորությունը, այնքան ավելի շատ է այն պարունակում ընդհանուրին վերաբերող պատկերացումներ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աղասյան Ա. Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում, Ոսկան Երևանցի», Երևան, 2009, 292 էջ:,
2. Աղասյան Ա., Հակոբյան Հ., Հասրաթյան Մ., Ղազարյան Վ., Հայ արվեստի պատմություն, «Զանգակ-97», 2009, Երևան, 575 էջ:
3. Խաչիկյան Վ. Սարգսյան Մ.,Կերպարվեստի տեսակները և ժանրերը, ,Ահ Երևան, 1983, 24 էջ:
4. Ս. Ս. Թերզյան, «Գեղանկարչության տեխնիկական միջոցներ», Երևան, 1985,45 էջ:
5. См.: А. С. Кантор-Гуковская, Ч. А. Мезенцева, А. Л. Ракова, Западно-европейская графика XV-XX веков, Ленинградское отделение, изд. §Искусство¦, 1985, 198 ст.
6. К. И. Панас, Гравюра 20 века стран Западной Европы и Америки, Москва, изд. §Изобразительное искусство¦, 1987. 198 369-427 ст.